ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

29.06.2023թ. | ժամը 16:00-17:00 | ՀՀ վարչապետի աշխատակազմի խորհրդակցությունների մեծ դահլիճ

Մասնակիցներ՝

Բազմաշահառու խմբի անդամներ՝

Նախագահող՝	Հովհաննես Հարությունյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
	Տիգրան Գաբրիելյան	Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ
	Արթուր Մանուկյան	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
	Արման Պողոսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ (այլընտրանքային անդամ)
	Նազելի Վարդանյան	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ-ի տնօրեն
	Վիկտորիա Բուռնազյան	«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի փոխնախագահ
	Անահիտ Սիմոնյան	«Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի նախագահ
	Օլեգ Դուլգարյան	«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի նախագահ
	Սուրեն Ներսեսյան	Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ
	Արմեն Ստեփանյան	ԶՊՄԿ ՓԲԸ կայուն զարգացման գծով տնօրեն
	Մանվել Եղիազարյան	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ
	Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն (այլընտրանքային անդամ)

ՀՀ ՎԱ ԱՃԹՆ-ի քարտուղարություն՝

Լուսինե Թովմասյան	քարտուղարության ղեկավար
Հասմիկ Մանուկյան	քարտուղարության փորձագետ

Հյուրեր՝

Ավետիկ Դարբինյան	փոխվարչապետ Տ. Խաչատրյանի ռեֆերենտ
Լեոնիդ Ավետիսյան	ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի տնօրեն
Արաքս Ավետյան	ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի ծրագրերի կառավարման բաժնի պետ

ԲՇԽ-ի բացակա անդամներ՝

Վաչե Տերտերյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Կարեն Կարապետյան	Արդարադատության նախարի տեղակալ
Արտյոմ Պետրոսյան	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի իրավաբանական տնօրեն
Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ադմինիստրատիվ տնօրեն
Արամ Օսիկյան	«ԱՍՍԱՏ Մ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն (այլընտրանքային անդամ)
Գագիկ Շահնազարյան	«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ)
Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն (այլընտրանքային անդամ)

Արձանագրող՝ Հասմիկ Մանուկյան

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ-ի) նիստի բացում

Նիստը նախագահող ՏԿԵ փոխնախարար Հովհաննես Հարությունյանը ողջունեց նիստի մասնակիցներին և նշեց, որ ԲՇԽ-ի գործընկերների 2023թ. առաջին հանդիպումն է: Հավաստիանալով, որ օրակարգի վերաբերյալ հարցեր չկան Հ. Հարությունյանը առաջարկեց սկսել օրակարգի քննարկումը:

Օրակարգային հարցերը

2. ՀՀ ԱՃԹՆ-ի 2022 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակների առաջընթացի հաշվետվությունների և 2021-2022թթ. աշխատանքային ծրագրի կատարողականի հաստատում (չքննարկվող)

Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) **հաստատեց** ՀՀ ԱՃԹՆ-ի 2022 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակների առաջընթացի հաշվետվությունների և 2021-2022թթ. աշխատանքային ծրագրի կատարողականը:

3. ՀՀ ԱՃԹՆ-ի 2023-2024 թվականների աշխատանքային ծրագրի և ազգային առաջնահերթությունների հաստատում (10 րոպե)

Մինչև հարցի ներկայացումը, ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը ողջունելով ԲՇԽ-ի նոր անդամներին՝ նրանց համար ներկայացրեց ԲՇԽ-ի նիստերի անցկացման եղանակը՝ համաձայն ԲՇԽ-ի աշխատակարգի և մանրամասնեց, որ ելույթների համար ընդունված է Չեթեմ հաուզի կանոնը:

Այնուհետ, Լ.Թովմասյանն ասաց, որ քննարկվող հարցը ինքն առաջարկում է դիտարկել օրակարգի հաջորդ՝ վավերացման հարցաթերթերի հետ միասին, քանի որ դրանք կապված են իրար և մի ամբողջություն են: Ասվեց, որ ազգային առաջնահերթությունները դեռ մարտին ներկայացվել են ԲՇԽ-ի անդամներին և դրանց մասով որևէ նկատառում չի ստացվել: Սակայն քաղաքացիական հասարակության խմբակցությունը որոշակի դիտարկումներ էր ներկայացրել աշխատանքային ծրագրի նախագծի վերաբերյալ: Տեղեկացվեց, որ աշխատանքային ծրագրի ֆորմատը չի փոխվել՝ հաշվի առնելով նախորդ վավերացման ժամանակ դրա գծով ստացված «գերազանցող»

գնահատականը: Խմբակցության հաջորդ կարևոր դիտարկումը վերաբերվում է 2024թ. ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի ֆինանսավորմանը: Բանն այն է, որ Համաշխարհային բանկի կողմից տրամադրված դրամաշնորհի աջակցությամբ հնարավոր է ֆինանսավորել 2023թ. ազգային զեկույցի կազմումը, բայց 2024 թվականի համար պետք է գտնել համապատասխան ֆինանսավորման աղբյուր: Քաղաքացիական հասարակության խմբակցությունը գտնում է, որ կառավարությունը այդ առումով բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցներ պետք է նախատեսի: Պարզաբանվեց, որ նախատեսվող տվյալների համակարգված բացահայտման համակարգը գործարկելուց հետո 2024 թվականի տարեկան զեկույցի բովանդակությունը և ծավալը էականորեն փոխվելու է և ներկա պահին դժվար է գնահատել դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը: Բացի դրանից, կա նաև կառավարության ուղղորդմամբ այլ դրամաշնորհային միջոցներ գտնելու հնարավորություն: Ուստի, առաջարկվում է աշխատանքային ծրագիրը հաստատել առանց ֆինանսավորման աղբյուրի նշմամբ, իսկ հետագայում՝ ճշգրտել այն: Քանի որ, ըստ ԱՃԹՆ-ի ստանդարտի, Հայաստանի ԱՃԹՆ-ն հնարավորություն ունի մյուս՝ 5-րդ ազգային զեկույցը հրապարակել մինչև 2024թ.ավարտը, ներկայումս, ըստ էության, քննարկվում է 6-րդ ազգային զեկույցի հարցը, և ԲՇԽ-ն այդ հարցի վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու ժամանակ առաջիկայում կունենա: Ինչ վերաբերվում է 5-րդ զեկույցին, ապա ՀԲ դրամաշնորհով նախատեսված ֆինանսավորմամբ կարելի է այն կազմել՝ սահմանելով սակայն զեկույցի ավելի փոքր շրջանակ, քանի որ կախված և ՀՀ դրամի հանդեպ ԱՄՆ դոլարի արժեզրկմամբ՝ փաստացի միջոցները նվազել են: Առաջարկվող մոտեցումը պայմանավորված է նաև հետևյալ հանգամանքով՝ գործարկելով տվյալների համակարգված բացահայտումների էլեկտրոնային համակարգը, ունենալու ենք հրապարակվող թվային տվյալներ՝ ավտոմատ համադրման հնարավորությամբ, որի արդյունքում ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի հետ համաձայնեցմամբ առաջիկա զեկույցներից կարելի է հանել ֆինանսական համադրման առաջադրանքը՝ այդպիսով փոքրացնելով անկախ ադմինիստրատորի աշխատանքի ծավալը:

Նշեց նաև, որ ծրագրի պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման հետ կապված միջոցառումները (որոնք դադարել էին՝ սպասելով հանքարդյունաբերության մշակվող ռազմավարության մեջ այդ հարցերի արծարծմանը) վերախմբագրվել են՝ հաշվի առնելու համար ՏԿԵՆ-ի գլխավորությամբ հանքարդյունաբերության ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացման շրջանակում շահագրգիռ կողմերի, և մասնավորապես, քաղաքացիական հասարակության խմբակցության ակտիվ մասնակցության ապահովումը: Այդ նպատակով ենթադրվում է պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի վերակազմավորում՝

պայմանավորված ԲՇԽ-ի անդամների փոփոխություններով և կատարվելիք աշխատանքներում ՏԿԵՆ-ի կողմից բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովմամբ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչը այս առումով առաջարկեց փոքր խմբագրում կատարել ծրագրում, որն ընդունվեց:

ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) հաստատեց ՀՀ ԱՃԹՆ-ի 2023-2024 թվականների աշխատանքային ծրագիրը և ազգային առաջնահերթությունները:

4. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ միջազգային վավերացման աշխատանքների ներկայացում, նախավավերացման հարցաթերթերի լրացման աշխատանքների քննարկում

ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը ներկայացրեց, որ վավերացման նախկին մոդելի «բավարարող» գնահատականը վավերացման նոր մոդելում համապատասխանում է «լիովին բավարարված» գնահատականին, որը Հայաստանը հույս ունի պահպանել: Լ.Թովմասյանը ներկայացրեց վավերացման ընթացակարգը, մասնավորապես.

- Հայաստանի հերթական վավերացումը սկսվելու է 2023 թվականի հուլիսի 1-ին:
- 2023 թվականի հուլիսի 1-ին ԲՇԽ-ն պետք է ներկայացնի իր կողմից լրացված Վավերացման «Շահագրգիռ կողմերի ներգրավվածության», «Թափանցիկության» և «Արդյունքների և ազդեցության» երեք հարցաթերթեր, որոնց բովանդակությունը ԲՇԽ-ի կողմից պետք է կոնսենսուսով հաստատված լինի:
- Հարցաթերթերը ստանալուց հետո ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը ձեռնարկելու է նախորդ գնահատականի վերանայում՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման գործում ձեռք բերված առաջընթացը: Վերանայման ընթացքում հեռավար (Zoom) հարցազրույցներ են վարվելու բոլոր շահագրգիռ կողմերի հետ առանձին-առանձին:
- Նոր գնահատման նախագիծն ուղարկվելու է բազմաշահառու խմբին՝ մեկնաբանությունների համար: ԲՇԽ-ն իր մեկնաբանությունները պետք է ներկայացնի 4 շաբաթվա ընթացքում:

- ԲՇԽ-ի մեկնաբանությունները ստանալուց հետո Քարտուղարության գնահատականը բերվելու է վերջնական տեսքի և Վավերացման կոմիտեի միջոցով ներկայացվելու է ԱՃԹՆ-ի խորհուրդ՝ հաստատման համար:
- Խորհուրդը ընդունելու է որոշում և, անհրաժեշտության դեպքում, նշանակելու է ուղղիչ գործողություններ:

Ազգային քարտուղարության կողմից խմբակցություններին է ուղարկվել լրացված հարցաթեթերի նախագծերը, որոնց վերաբերյալ դիտարկումներ է ներկայացրել քաղաքացիական հասարակության խմբակցությունը: Դիտարկումները հիմնականում կապված են ԲՇԽ-ի առկա նիստերի անցկացման ոչ բավարար քանակի հետ, որը, ըստ խմբակցության կարծիքի՝ սահմանափակել է ոլորտի կառավարման հետ կապված ավելի լայն հարցերի քննարկման հնարավորությունները, չնայած, որ Ստանդարտի բոլոր պահանջները ապահովվել են: Ազգային քարտուղարության և խմբակցության բոլոր անդամների մասնակցությամբ հուլիսի 26-ին կայացած աշխատանքային հանդիպման ժամանակ քաղաքացիական հասարակության խմբակցությունը ներկայացրել է առաջարկություն, ըստ որի ԲՇԽ-ն կարող է ինքը առաջանցիկ եղանակով ընդունի ուղղիչ գործողության հայտարարություն՝ առկա նիստերի քանակը ըստ Աշխատակարգի, այսինքն՝ տարեկան նվազագույնը 3-ը, պահպանելու վերաբերյալ: Առաջարկին համապատասխան հայտարարության տեքստը ընդունվեց ԲՇԽ-ի կոնսենսուսով: Առաջարկվեց նաև խմբագել ԲՇԽ-ի աշխատակարգը՝ սահմանելով, որ ԲՇԽ-ի նիստերը պետք է կայանան առնվազն տարին 3 անգամ:

Այնուհետ Լ.Թովմասյանը անդրադարձավ հարցաշարերում առաջարկվող ԲՇԽ-ի ինքնագնահատականներին: Ստանդարտի երկու պահանջների՝ պայմանագրերի թափանցիկության (2.4-րդ պահանջ) և իրական շահառուների բացահայտման (2.5-րդ պահանջ) մասով առաջարկվում է «գերազանցված» ինքնագնահատականը, մնացած մասով՝ «լիովին բավարարված», բացի «ԲՇԽ-ի վերահսկողություն» պահանջից, որը քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից առաջարկվել է գնահատել «հիմնականում բավարարված»: ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության ներկայացուցիչը նշեց, որ չնայած ԱՃԹՆ-ի՝ հունիսին Դաքարում կայացած գլոբալ համաժողովում պարբերաբար Հայաստանը նշվում էր որպես առաջատար և օրինակելի երկիր, բայց մեր ԲՇԽ-ն պետք է պահանջկոտ լինի և ընդունի, որ, մասնավորապես, հենց նիստերի սակավաթիվ լինելն ազդել է հանքարդյունաբերության ոլորտում ընթացող գործընթացների վրա ազդելու ԲՇԽ-ի հնարավորությունների վրա:

ԲՇԽ-ն ընդհանուր կոնսենսուսով հաստատեց հարցաթերթերի առաջարկվող տարբերակները և դրանցում նշված ԲՇԽ-ի ինքնագնահատականները՝ երկու պահանջի գծով՝ «գերազանցված», մեկ պահանջի գծով՝ «հիմնականում բավարարված», մնացածի մասով՝ «լիովին բավարարված»:

Լ.Թովմասյանը նշեց, որ քարտուղարությունը սահմանված ժամկետում հարցաթերթերի անգլերեն տարբերակները կներկայացնի ԱՃԹՆ միջազգային քարտուղարությանը և վավերացման թիմին: Ասվեց նաև, որ վավերացման հարցազրույցների ժամանակացույց-առաջարկը կներկայացվի առաջիկա շաբաթվա ընթացքում և որ դրանք կայանալու են հուլիսի վերջ օգոստոսի առաջին կես ժամանակահատվածում:

5. Հայաստանում ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների (ՏՀԲ) տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքների քննարկում

Ազգային քարտուղարության ղեկավարը ներկայացրեց, որ ԲՇԽ-ի անդամներին շրջանառվել է համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքը, որի մշակման գործում ակտիվ մասնակցություն է ունեցել ԷԿԵՆԳ-ը: Տեխնիկական առաջադրանքը մշակվել է ՏՏ խորհրդատուի կողմից և քննարկվել է ԷԿԵՆԳ-ի և ԱՃԹՆ-ի շահագրգիռ բոլոր պետական մարմինների պատասխանատուների հետ:

Համառոտ ներկայացրեց այն խնդիրների շրջանակը, որոնք լուծվելու են համակարգի ներդրման արդյունքում: Ասվեց, որ այդ համակարգը փոխարինելու է ներկայումս գործող ԱՃԹՆ հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակին, որի հետևանքով էականորեն փոխվելու է ազգային տարեկան զեկույցների բովանդակությունը: Ասվեց, որ տվյալների համակարգված բացահայտումների տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքի հաստատումից հետո այն ներկայացվելու է նաև թվայնացման խորհրդի հաստատման, այնուհետև հարտարարվելու է մրցույթ:

Բազմաշահառու խմբին առաջարկվեց մրցութային հանձնաժողովը ձևավորել հետևյալ կազմով.

- ԷԿԵՆԳ-ի ներկայացուցիչ (հանձնաժողովի նախագահ)
- ՊԵԿ-ի ներկայացուցիչ (ՊԵԿ ՏՏ համակարգերի պատասխանատու)
- ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի քաղ. հասարակության խմբակցության կողմից առաջարկվող թեկնածու
- ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի արդյունահանող ընկերությունների խմբակցության կողմից առաջարկվող թեկնածու (նախընտրելի է տվյալ անձի տեղեկատվական տեխնոլոգիաների հմտություններ ունենալը)

- ԱՃԹՆ-ի քարտուղարության (Վարչապետի աշխատակազմի) ներկայացուցիչ (ԱՃԹՆ-ի ստանդարտին և մոտեցումներին համապատասխանություն ապահովելու նպատակով)
- ԱՃԹՆ-ի գնումների մասնագետ (առանց ձայնի իրավունքի)

Քաղաքացիական հասարակության խմբակցությունը առաջադրեց Սոնա Այվազյանի թեկնածությունը: ՊԵԿ-ը **առաջարկեց** հանձնաժողովում ունենալ 2 անդամ՝ համապատասխան գործառույթերի պատասխանատուներ: Առաջարկը **ընդունվեց**:

Քանի որ տեխնիկական առաջադրանքի հաստատման հարցում նախատեսված աշխատանքային ծրագրից ԲՇԽ-ն ետ է ընկել, հարկ կլինի համաձայնություն ստանալ Համաշխարհային բանկից՝ դրամաշնորհի ժամկետը մինչև 2024թ. տարեվերջ երկարաձգելու համար, որն անհրաժեշտ է տեխնիկական առաջադրանքով մրցույթը հայտարարելու, կատարող ընկերություն ընտրելու և աշխատանքներն իրականացնելու համար և մեկ տարվա տվյալներով համակարգի թեսթավորումը ապահովելու համար: Առաջարկվող գնման մեթոդն է՝ մրցակցային QCBS մեթոդը, որի ընթացակարգը ներկայացվեց ԲՇԽ-ի անդամներին:

Բացի դրանից նշեց, որ առկա է որոշակի ռիսկ նախահաշվային ֆինանսական միջոցների անբավարարության մասով: Տեղեկացվեց նաև, որ ՏԲՀ տեղեկատվական համակարգի մշակման և տվյալների հասանելության ապահովման համար անհրաժեշտություն է առաջանալու փոփոխություններ և լրացումներ կատարել մի շարք իրավական ակտերում: Այդ աշխատանքներն իրականացնելու համար ՀԲ դրամաշնորհի հաշվին հնարավոր է առաջանա կարճաժամկետ իրավական փորձագետ վարձելու անհրաժեշտություն: Առաջարկվեց նաև ՏՀԲ ՏՏ համակարգի ստեղծման աշխատաններին աջակցելու և աշխատանքները վերահսկելու նպատակով ստեղծել բոլոր պատասխանատու պետական մարմինների և ԲՇԽ-ի ներկայացուցիչներից կազմված միջգերատեսչական աշխատանքային խումբ: Առաջարկը ընդունվեց ԲՇԽ-ի կողմից:

ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) հաստատեց ներկայացված ՏԲՀ տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքը և առաջարկվող մրցութային հանձնաժողովի կազմը: ԷԿԵՆԳ-ի ներկայացուցիչը համաձայնեց նախագահել մրցութային հանձնաժողովը:

Հ. Հարությունյանը **արձանագրեց**, որ ԲՇԽ-ի արդյունահանող ընկերությունների խմբակցությունը և ՊԵԿ-ը առավելագույնը 1 շաբաթյա ժամկետում ազգային քարտուղարություն կներկայացնեն մրցութային հանձնաժողովի իրենց թեկնածուների անունները:

6. Այլ հարցերի քննարկում

Քննարկվեցին նաև հետևյալ հարցերը.

6.1. Միջազգային համագործակցություն

- Նիստի նախագահողն անդրադարձավ ս.թ. հունիսի 11-17-ը Սենեգալում անցկացված ԱՃԹՆ-ի համաշխարհային կոնֆերանսին Հայաստանի մասնակցությանը: Հ. Հարությունյանը գոհունակությամբ փաստեց, որ առաջիկա 3 տարում ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդում Հայաստանն է ներկայացնելու ԱՃԹՆ-ի եւրոպական երկրների խմբակցությունը: Այդ դերակատարումը իրականացնելու է ազգային քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը, որը Դաքարում՝ ԱՃԹՆ-ի գլոբալ համաժողովին ընտրվել է որպես միջազգային խորհրդի անդամ: Լ.Թովմասյանը նշեց, որ այս ձեռքբերումը կապված է նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի իրականացման հարցում առաջամարտիկ երկիր համարվելու հագամանքի հետ, իսկ դրան նպաստել է ոչ միայն ԲՇԽ-ի այլև պետական մարմինների, հատկապես, միջին օղակների, ինչպես նաև ընդերքօգտագործող ընկերությունների աշխատանքը, որն ապահովել է Ստանդարտով պահանջվող ամբողջ տեղեկատվության ժամանակին և պատշաճ ներկայացումը և հրապարակումը:

- Լ.Թովմասյանը ներկայացրեց, որ լավագույն փորձի ուսումնասիրության նպատակով ս.թ. հուլիսի 17-19-ը Հայաստան է այցելելու Տաջիկստանի ԲՇԽ-ի պատվիրակությունը և խնդրեց համապատասխան խմբակցություններին հանդիպել տաջիկ գործընկերներին՝ ներկայացնելու հետաքրքրող հարցերի վերաբերյալ իրենց փորձը, դիրքորոշումները և ոլորտում կատարված և ընթացիկ բարեփոխումները: Հանդիպումների ժամանակացույցը ազգային քարտուղարության կողմից լրացուցիչ կներկայացվի և կհամաձայնեցվի մասնակիցների հետ:

6.2. Իրական շահառուների բացահայտման աշխատանքներ

- Ներկայացվեց, որ համաձայն ազգային քարտուղարության կողմից կատարվող ԻՇ հայտարարագրերի պարբերական մոնիթորինգի՝ ընկերությունների կողմից դրանց լրացման ընդհանուր մակարդակը լավ է, բացառությամբ մեկ ընկերության, որի ընդերքօգտագործման իրավունքը վերականգնվել է, սակայն ընկերությունը չի ներկայացրել հայտարարագիր: Նշվեց, որ դրա մասին տեղեկատվությունը քարտուղարությունը ներկայացրել է լիազոր մարմիններ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով:

6.3. Հանքարդյունաբերական ծրագրերում պետական մասնակցության վերաբերյալ հարցերի քննարկում (քաղաքացիական հասարակության խմբակցությունների առաջարկությամբ)

Խմբակցության ներկայացուցիչները խոսեցին պետական մասնակցության որոշումների ընդունման բաց ընթացակարգերի անհրաժեշտության, այդ ոլորտում վարվող քաղաքականության, պետության կողմից ընկերություններում մասնակցության ձևի, բաժնեմասերից ստացվելիք դիվիդենտների ստացման գործընթացների, հնարավոր շահերի բախման, ընկերություններում պետության մասնակցության ռիսկերի և այլ նմանատիպ հարցերի մասին: Առաջադրված հարցերի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացրեցին պետական մարմինների, ինչպես նաև ընդերքօգտագործող ընկերության ներկայացուցիչները:

Քաղաքացիական հասարակության խմբակցության ներկայացուցիչը խոսեց նաև արդեն հաստատված հանքարդյունաբերության ռազմավարության վերաբերյալ խմբակցության դիրքորոշումը անփոփոխ մնալու և դրա մեջ լուծում չստացած հարցերի կարևորության մասին:

ԲՇԽ-ի ընդրքօգտագործող ընկերությունների ներկայացուցիչը հարց բարձրացրեց կապված երկրաբանական հետախուզման թույլտվության տրամադրման ժամկետների խախտման հետ կապված: Հ.Հարությունյանը պարզաբանեց, որ նման տիպի խախտումները կապված են ներկայացված տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու հետ, որ, ցավոք, երբեմն տեխնիկապես հնարավոր չի լինում ավելի արագ իրականացնել: Նաև ասվեց, որ կոնկրետ գործով նախարարությունը կարող է առանձին քննարկել հարցը:

Հավելված 1

Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի 29.06.2023թ. հայտարարությունը[1]

[1] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_announcement-on-MSG-Meetings-29062023.pdf